

ՀԾ.ՄԱՌՈՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կ. Ս. ՀԱՆՈՒՄՅԱՆ

HYSTRICHIS TRICOLOR (DUJARDIN, 1845) ՀԵԼՄԻՆԹԻ  
ՀԱՅՏՆԱՔԵՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ  
(NEMATODA: DIOCTOPHYMIDAE)

Մեր ռեսպուբլիկայում *Hystrichis tricolor*-ի հայտնաբերումը ներկայացնում է դիտական ու գործնական հետաքրքրություն՝ այն առումով, որ նա մակարուծվում է տնային ու վայրի բաղերի, սազերի և հավերի օրգանիզմում, հարուցելով ստամոքսային հիստորիխոզ: Այս հելմինթոզը բավականաչափ տարածված է, շատ ծանր ընթացք ունի և հաճախակի էնզոոտիայի ու անկումների պատճառ դառնալով, խոշոր վնաս է հասցնում թռչնաբուծությանը:

Բաղերի հիստորիխոզի դեպքեր նկարագրել են՝ Ֆ. Դյուժարդենը (Dujardin, [3]) Փարիզում, Ն. Մ. Կարմանովան՝ [4] Վրացական ՍՍՌ-ում, Ա. Ն. Օսիպովը՝ [6] Նիկոլայևսկի մարզում, Ա. Ֆ. Սիրենկոն և Գորոդեցկին՝ [7] Օդեսայի մարզում, Շևցովը՝ [9], Վրացական ՍՍՌ-ում (Փոթի), Ռոստովի, Իիևի մարզերում և Կրասնոդարի երկրամասում, Վ. Գ. Էվրանովան՝ [10] Տաջիկական ՍՍՌ-ում: Վ. Պ. Գումենշչիկովան [1] Օդեսայի մարզում (Բելյանսկի շրջան) հիստորիխոզ է հայտնաբերել հավերի և սազերի մոտ:

Մենք 1959 թ. ֆաունիստիկական հետազոտությունների ժամանակ առաջին անգամ *H. tricolor* հայտնաբերեցինք էջմիածնի շրջանի Սարվանլար գյուղում որսված կուլիկներից՝ մեծ կտցարի (*Gapella media* Lath.) մոտ:

Մեծ կտցարն ունի բավականին լայն արեալ՝ Սկանդինավիայից մինչև Ինիսեյ. դեպի հյուսիս  $68-71^{\circ}$  հ. լ., դեպի հարավ մինչև Պոլոտավա, Վորոնեժ, Կուլինդինյան տափաստանները և Մինուսինսկի շրջանը: Ձմեռում է Հարավային Աֆրիկայում (Ս. Կ. Դալ [2]):


Հայկական ՍՍՌ-ում մեծ կտցարը հիմնական բնակիչ չէ. նա չվում է մեղմոտ գարնանը՝ ապրիլ ամսից մինչև մայիսի կեսերը, և աշնանը՝ սեպտեմբերին. չինում է խոնավ վայրերում՝ ճահիճ, դետափ, ջրավազան և այլն: Այս էկոստացիաները նպաստավոր են նաև *H. tricolor*-ի միջանկյալ տեր՝ սակավախողան օրդերի (*Oligochaeta*) զարգացման համար:

Հայտնաբերված հասուն նեմատոդները տեղարկված էին կտցարի դեղձախին ստամոքսի արտաքին պատի շարակցական հյուսվածքների պատիճներում, որտեղ նրանք մարմնի միջին մասերով այնքան պինդ էին օղակավորված, որ դուրս բերել այնտեղից, առանց այդ մասերը վնասելու, հնարավոր չէր: Միայն պարազիտի գլխային ու պոչային մասերը դուրս էին ցցված թռչնի աղիքի լուսանցքը:

Հստ Կարմանովայի [4]. տրիկոլորի գլխային մասը կարող է լրիվ ներս տաշվել տիրոջ ստամոքսի պատի խորքը և նորից դուրս ձգվել նրա լուսանցքից: Մեծ կտցարի կրկնությունը նա գլխային փշերով քայքայում է թռչնի ստա-

մոքսի պատերի լորձաթաղանթի բջիջները, վիրավորում է արյունատար անոթները և սնվում նրանց մնացորդների էքսուդատներով ու արյունով:

Կտցարի մոտ հայտնաբերված տրիկոլորի մորֆոլոգիական հատկանիշները համեմատելով բադի ու հավի մոտ հայտնաբերված տրիկոլորի հատկանիշների հետ, նկատել ենք որոշ տարբերություններ նրանց մարմնի առջևի մասի փշերի բանակի, տարածվածության և չափսերի միջև: Մեր նմուշի գլխային մասի տրամագիծը 0,420 մմ է. (ըստ Գումենշչիկովայի՝ 0,5 մմ է, ըստ Կարմանովայի՝ 0,67—0,76 մմ.): Նրա դադաթային մասից դեպի ներքև 1,860—1,900 մմ (ըստ Գումենշչիկովայի՝ 8,4—10,47 մմ., ըստ Կարմանովայի՝ 1,2—1,6 մմ.) տարածություն ծածկված է կուտիկուլային ուժեղ փշերով (նկ. 1): Այդ փշերը դասավորված են 26,28 լայնական (ըստ Գումենշչիկովայի՝ 90) և 24—29 երկայնական շարքերով: Ամենախոշոր փշերի երկարությունը 0,036—0,039 մմ է. (ըստ Գումենշչիկովայի՝ 0,045—0,048 մմ.): Տրիկոլորի գլխային մասի այդպի-



*Histrichis tricolor* (Dujardin, 1845) 1. Պարագիտի գլխային մասը, 2. արույի պոչային մասը, 3. հասուն ձուռն, 4. անաս ձուռն (օրիգինալ):

սի ուժեղ զինվածությունը, ըստ Կարմանովայի [4], ոչ թե ֆիքսացիայի հարմարանք է, ինչպես սովորաբար լինում է որդերի մոտ, այլ սննդառության, քանի որ պարագիտը, իր հարմար տեղարկման շնորհիվ, ֆիքսացիայի առանձին օրգանի կարիք չունի: Շատ բնորոշ են նրա պոչային մասը՝ կենտ սպիկուլայով (նկ. 2) և ձվերը՝ փոսիկապատ թաղանթով (նկ. 3, 4):

Հայտնաբերված նեմատոդները գտնվում էին հասունացման տարբեր աստիճաններում, որից կարելի է եզրակացնել, որ թռչնի որդային ինվազիան ունի տեղական բնույթ: Վերջինս գուցե մեզ թույլ տա ենթադրելու, որ հիստրիխոդ կարող է զոյություն ունենալ նաև ռեսպուրիկայի տնային ջրալողաց թռչունների մեջ, որովհետև վերջիններս իրենց սննդային նյութերի բնույթով

աղական մոտ են կապարների կարգին: Այս խնդրի պարզաբանումը հանդիսա-  
նալու է մեր հետադա ուսումնասիրության առարկաներից մեկը:

Այլևհան ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի  
Կենդանաբանական ինստիտուտ

Ստացվել է 13 VI—1961 թ.

К. С. АХУМЯН

## ОБНАРУЖЕНИЕ ГЕЛЬМИНТА—HYSTRICHIS TRICOLOR (DUJARDIN, 1845) В АРМЯНСКОЙ ССР (NEMATODA: DIOSTORHUMIDAE)

### Р е з ю м е

Обнаружение *H. tricolor* на территории Армянской ССР представ-  
ляет теоретический и практический интерес; т. к. эта нематода является  
возбудителем гистрихоза домашних и диких уток, гусей и кур, причиняя  
иногда чувствительный экономический ущерб птицеводству, вызывая  
энзоотии и падеж этих птиц, главным образом молодняка.

Энзоотия гистрихоза, вызванная *H. tricolor*, у уток была обнаруже-  
на Дюжарденом [3] в 1845 году; М. П. Любимовым [5] в 1926 г.; А. Ф.  
Сиренко и М. И. Городецким [7] в 1956 г.; Швецовым [9] в 1952 г.; В. Г.  
Эврановой [10] в 1954 г.; Е. М. Кармановой [4] в 1955 г.; А. Н. Осиповым  
[6] в 1959 г.; В. П. Гуменьщиковой [1] в 1959 г. констатирован гистрихоз  
у 4—5-месячных цыплят и гусей, часть которых пала от этого гельмин-  
тоза.

При наших фаунистических исследованиях, проведенных в 1956—  
1959 гг., обнаружен гистрихоз триколор у нового хозяина—дупеля (ку-  
лик), который, имея широкий ареал и тесный контакт с домашними пти-  
цами, легко может распространять среди них гистрихоз. Дупель рас-  
пространен от Скандинавии до Енисея; к северу 68—71° с. ш., к югу до  
Полтавы, Воронежа, Кулундинской степи и района Минусинска, зимует  
в Южной Африке (С. К. Даль [2]). В Армянской ССР дупель встречается  
на пролете: весной—в апреле до середины мая и осенью—в сентябре.  
Обитает в сырых местах на разливах, по болотам и их берегам. Чаще  
всего дупеля можно встретить в Степанаванском районе.

Сравнивая морфологические признаки обнаруженного нами у ду-  
пеля *H. tricolor* с таковыми от уток и кур, замечаем некоторую разницу  
в количестве и размерах шипов в рядах на переднем конце тела: диа-  
метр головной части паразита 0,420 мм (по Гуменьщиковой—0,5 мм, по  
Кармановой 0,67—0,76 мм); она на расстоянии 1,860—1,900 мм (по Гу-  
меньщиковой 8,4—10,47 мм, по Кармановой 1,2—1,6 мм) покрыта шипи-  
ками (рис. 1). Шипики расположены в 26—28 (по Гуменьщиковой 90)  
поперечными, и 24—29 (по Кармановой 28—34) продольными рядами.  
Диаметр самых крупных шипов 0,036—0,039 мм (по Гуменьщиковой  
0,045—0,048 мм).

Разные экземпляры обнаруженных паразитов находились на раз-

личных степенях зрелости, что указывает на местный характер инвазии. Это обстоятельство быть может позволит нам прийти к заключению, что возможность наличия гистрихоза у домашних водоплавающих птиц Эчмиадзинского района не отрицается. Выяснение этого вопроса является предметом наших дальнейших исследований.

### Л И Т Е Р А Т У Р А

1. Гуменьщикова В. П. Бюллетень научно-технической информации Всесоюзного института гельминтологии имени академика К. И. Скрябина. 5, 17—20, 1959.
2. Даль С. К. Животный мир Армянской ССР, 192—193. Изд. АН АрмССР, Ереван, 1954.
3. Dujardin F.—Histoire naturelle des Helminthes ou Vers intestinaux. 654 p. Paris, 1845.
4. Карманова Е. М. Тр. гельминтологической лаборатории АН СССР, т. IX, 113—125, 1959.
5. Любимов М. П., Тр. Госунта экспериментальной ветеринарии, т. III, в. I, 13—26, 1926.
6. Осипов А. Н. Сборник работ по гельминтологии, в. I, 137—138, 1959.
7. Сиренко А. Ф., Городецкий М. И. Журн. Социалистичное тваринництво, 4, 1951.
8. Скрябин К. И. и Шихобалова Н. И. Определитель паразитических нематод, т. IV, Изд. АН СССР, М., 1954.
9. Шевцов. Тр. Киевского вет. института, т. XII, Посвящ. 300-летию воссоединения Украины с Россией, 1955.
10. Эвранова В. Г. Тр. Казанского филиала АН СССР, серия биологическая, в. 3, 223—226, 1954.